ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

ապրիլի 2021 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի №119Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ՏԻՐԱԿԱԼ» սահմանափակ պատասխանտվությամբ ընկերության 2021 թվականի մարտի 31-ի №31/03-01 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի հունիսի 26-ի «ՏԻՐԱԿԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Կուրթան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №119Ա որոշմամբ «ՏԻՐԱԿԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Կուրթան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0207 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝

1) 1-ին կետում «Կուրթան համայնքի վարչական տարածքում» բառերը փոխարինելով «Գյուլագարակ համայնքի վարչական տարածքում (գյուղ Կուրթան)» բառերով և «15 տարի» բառերը՝ «մինչև 2036 թվականի հունիսի 26-ը» բառերով,

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2021 թվականի հունիսի 26-ը» բառերը փոխարինելով «մինչև 2036 թվականի հունիսի 26-ը» բառերով:

2. «ՏԻՐԱԿԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «Կուրթան» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ՏԻՐԱԿԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար ավարտվում է 2021 թվականի հունիսի 26-ին,

2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունիսի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
ապրիլի 2021թ.